

2. Հեղինեք քազուհիի՝ մօրն Կոստանդիանոսի, Կոստանդիանոս կայսեր, Հայոց Տրդատ քազաւորի, Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Մեծն Ներսէս Պարբէս հայրապետի Ս. Տեղեաց աւանդական շիրուքիւնները (Գ. դար)։ — Նախնի եւ արդի մատենագիրները Երուսաղէմի Ս. Տեղեաց եկեղեցիներու շինութիւնները առ հասարակ կը վերա-

«Վասն Հեղինեայ դժխոյնն Ոսրոյեաց»։ «Ձայսու ժամանակաւ եւ սո՞վ մեծ լինել ի Հրեաստանի, յորում եւ դժխոյն Հեղինէ գնեաց ցորեան յեգիպտոսէ բազում ոսկւոյ եւ բաշխեաց կարօտելոց...» «Եւ զի սորին իսկ այս Հեղինեայ, զորմէ յիշատակէ պատմագիրս, կան շիրքիմք նշանաւոր մինչեւ ցայսօր ժամանակի ի բուրասանս քաղաքին որ Ելիա կոչի, զոր եւ Աղիաբինաց դժխոյն ասէն լինել»։

Յովսէփոս այս Հեղինէի եւ իր Իզադ որդւոյն մասին քննարձակ տեղեկութիւններ կուտայ (տե՛ս, Հնախօս. Ի. 2)։ Հեղինէն կինն էր Աղիաբենի Մոնթբազոս քազաւորին եւ մայրը անոր յայտողին՝ Իզադի։ Երկուքը Իզադ եւ Հեղինէ քննուեցին հրեական կրօնը, վերջինս Երուսաղէմ եկաւ սո՞վի ժամանակ, մեծ օգնութիւն բրաւ սո՞վի նեղութեանց ասեն, նախ աջակցութեամբ իր որդւոյն։ Անոնց մահէն յետոյ՝ մօր եւ որդւոյն սկեռօտիքը Երուսաղէմ փոխադրուեցան եւ քաղաւեցան հիւր պարիսպներէն դուրսը, ուր Հեղինէն կանգնած էր երեք բուրգեր (Յովս. Հնախօս. Ի. 3, 4)։

«Պաւսանիաս (Արկադեան գիրքին մէջ) կը խօսի Հեղինէի այս մեծ բուրգերու մասին եւ կը բաղդատէ զանոնք Մաւսոյիոսի շիրմին հետ։ Յերոնիմոս նաեւ կը վկայէ թէ իր ժամանակին անոնք կանգուն էին։ Հեղինէ Երուսաղէմի մէջ ունէր պալատ մը»։

Աղիաբեն հուանաբար փոքրիկ գաւառ մըն էր Տիգրիսի, Լիկոսի եւ Կորդեան լեռներուն միջեւ (տե՛ս Գիոկաստիոս, LXXVIII), բայց Պիլիսոսի ժամանակէն առաջ համաձայն Vaux ի (տե՛ս, Dictionary of Greek and Roman geography) Աղիաբեն բառը կը զորձաւորէր քննարձակ իմաստով՝ քննահանրապէս Assyria ցոյց տալու համար (տե՛ս Պիլիսոս, Ի. Ն. 2. 12 եւ Ամմիանոս Մարկեղիանոս, ԻԳ. 6)։ Անձուկ իմաստով Իզադ Ասիաբենի քազաւորն էր (The Nicene and post Nicene Fathers second series, հատ. Ա. էջ 113)։

«Գերեզման քազաւորաց» անունը կը տրուի Ասիաբենի արքայա-